

Եւ ամէնքս ալ պարտք մը կատարած կը լլանք , պարտքերուն է՛ն նուիրականէ :

Ամերիկայի Հայերն արտասահմանի բոլոր հայ գաղթականութեանց յառաջապահներն են . կարժէ եւ պէտք է հետեւինք անոնց :

Սիրե՛նք բարեկամներնիս . մանաւանդ այն ատհն երբ ողողուած հնք թշնամիներով :

Յ. Ա.ԶԳԿԱՊԵՏԵԱՆ



ՊԱՐԻՍԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

Ուրախութեամբ եւ գոհութեամբ կարձանադրենք անունները մեր այն բարիզեան ուսանողներուն . որոնք իրենց ստացած « Առաջին մրցանակ »ներով պատիւ կը բերեն իրենց անձին , եւ իրենցմով՝ իրենց ծնողաց՝ նա մանաւանդ՝ իրենց չուառ ազգին . ինչ որ քիչ միսթարական չէ տեսնել — ազգին ներկայ տագնապալից վիճակին մէջ — դարգացած եւ լուրջ երիտասարդներու խումբ մը :

Այս ուսանողներու գլուխը կը գանուի պ. Մաքսուսեան , Խզմիրցի . Մաքսուտեան-Մաքրթալեան համբաւաւոր գերզաստանի մէկ անդամը , որ Քօնսէրվաթուարի այս տարւան քննութեանց մէջ , ի ներկայութեան ականաւոր թատրերգակներու . Առաջին մրցանակի արժանացաւ ողբերգութեան եւ զաւեշտի զերերուն մէջ : Պ. Մաքսուտեան , Սիլվէնի այս նշանաւոր աշակերար . կատարեալ Թերիբուէլ մը եղած է Արքայն զքունու » խաղին . մէջ եւ կատարելութեան զենիթը հասուցած Վիքթոր Հիւգոյի այդ դիւցազնի յատկացուցած դերը : Խնչպէս կակնարկէ Figaro , անշուշտ Հայը . ցաւերու եւ տառապանքներու դարերէ ի վեր տոկացող այս վատարազդ ազգը պիտի արտադրէր կատարեալ ողբերգակ մը . . . ողբերգելու համար օր մը թերեւս իր ազգի ողբալի վիճակը եւ նահատակներու կեանքը :

Պ. Մաքսուտեան առաջին օտարն է որ Փրանսական աղգային թատերական բեմին վրայ պիտի երեւայ . իր առւած քննութենէն անմիշապէս յետոյ ընդունուած ըլլալով Օդէօն թատրոնի ընկերակցութեան մէջ , ինչ որ գրեթէ անկարելի բան մընէ :

Նոյնպէս , նմանը խիստ հազուագիւտօրէն անմնուած յաջողակութեամբ մըն է որ արժանացած է Առաջին մրցանակի պ. Մթամպօլլուօղլուեան , կամուրջներու եւ իճուղիներու Ազգային Վարժարանէն : Ինչ-

պէս նահեւ Պարիսի գաղթականութեան անդամներէն պ. Ներսէս Մէլիք-Մինասեանցի որդին նոյնպէս Առաջին մրցանակի արժանացած է Պարիսի Վաճառականական Բարձրագոյն Վարժարանին քննութեանց մէջ :

Մեր հրապարակային շնորհաւորութիւններն այդ ազնիւ եւ ժրաշան ուսանողաց հւ մեր խնդակցութիւնները՝ անոնց ծնողաց : Կը մաղթենք փառաւոր ապագայ :

Ոչ նուազ ուրախալի եւ շնորհաւորելի է նաև Աֆրօն-Կարահիսարցի պ. Հայկ Մուրատեան, աշակերտ Պարիսի Ազգային Հանքարանական Վարժարանին, որ իր ներկայ տարւան հարցաքննութեանց մէջ իր 36 եւրոպացի գասընկերներուն վեցերորդը եղաւ, առանց դասագիրք մը ունենալու ձեռքը, եւ որ աւելին է՝ ապրելու ամենէն, կենսական պէտքն եղող սնունդին այ հազիւ 1/5ը առնելով : Պ. Հայկ Մուրատեան յառաջիկայ տարի, հանքային երկրաշափ կըլլայ իր 21 տարեկան հասակին մէջ :

Պիտի խնդրէինք մեր « Բանասէր »ի Մեծ, ընթերցողներէն որ հաճէին մէկ-մէկ նուէր զրկել այս ժրաշան ուսանողին համար, որ զէթ իր ուսանողութեան վերջին տարին զրկանքներով չանցունէ :

« Իրաւոննք »ի մէջ ալ կը կարդանք, թէ պ. Մ. Փորթուգալեանի որդին պ. Վահան՝ Մարսէյլի Լիսէին վիճակացոյցներու բաշխման առթիւ ստացած է գերենտիր մրցանակը, փիլիսոփայութեան ճիւղին մէջ :



ԵՏՐՈՒՐԵՐէՆԸ ԹՈՒՐԳԵՐէՆ Թէ ՀԱՅԵՐԷՆ

—

Պարիսի Ասիական Ընկերութեան Մարտ 11-ի նստին մէջ պ. Կարազ զը Վոյայնած էր, թէ ետրուրացիներու լեզուն թուրքերէնի հետ ազգակցութիւն ունի բայց նոյն Ընկերութեան յաջորդ նստին՝ (15 Ապրիլ) կ. Յ. Բասմաջեան իր փաստերը մէջ սերելով հերքեց պ. Կարազը Վոյ կարծիքն եւ պնդեց, թէ ետրուրերէնը կամ պէտք է՝ Սոֆուս Բուգդէի համաձայն՝ մերձեցնել հայերէնի, եւ կամ Թոմսոնի ցուցումներուն նայելով՝ համեմատել վրացերէնի հետ :

